

## Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆԸ ՎԱՐԴԳԵՍ ՄԱՆՈՒԿԻ ԱՎԱՆԴԱՁՐՈՒՅՑՈՒՄ

Վարդգես Մանուկն ու իր հիմնադրած Վարդգեսավան բնակավայրը հիշատակված են պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմոթյան» այն հատվածում, որ խոսվում է Հայոց Վաղարշ քաջավորի ծավալած շինարարության և Վաղարշապատի մասին: Նա գրում է. «Սա պատեաց պարսպաւ եւ զհօր աւանն Վարդգէսի, որ ի վերայ Քասաղ գետոյ. զորմէ յառասպելն ասեմ».

Հատուած զնացեալ Վարդգէս մանուկն  
Ի Տուհաց զաւառէն, զՔասաղ գետով,  
Եկեալ նստաւ զԾրեշ բլրով,  
զԱրտիմեդ քաղաքաւ, զՔասաս գետով,

Կուլ կոփել զրուոնն Երուանդայ արքայի:

Այս Երուանդ՝ առաջինն է, Սակաւակեացն, որ ի Հայկազնց, զորյ զքոյրն կին առեալ Վարդգէսի շինեաց զաւան զայս»<sup>1</sup>:

Բերված հատվածից պարզվում է, որ ապագա Վաղարշապատի տարածքում գոյութուն ունեցած Վարդգեսավան բնակավայրը՝ «հզօր աւանն Վարդգէսի», ունեցել է իր նախորդը՝ «Արտիմեդ քաղաք»-ը: Մի պահ կարող է թվական քաղաքի մասին է: Բայց եթե Արտիմեդը այդպիսին է եղել, ապա նրա հետնորդ Վարդգեսավանը ինչո՞ւ ոչ թե քաղաք, այլ առան է կոչվել, իսկ եթե Արտիմեդ-Վարդգեսավանի քարաշեն պարիսպը կար, ապա Վաղարշ քաջավորը ինչո՞ւ էր պարապապատել բնակավայրը և այն վերանվանել Վաղարշապատ: Կարծում ենք, որ զործ ունենք տարբեր որակի՝ փայտաշեն և քարաշեն պարիսպների հետ: Արտիմեդն ունեցել է, ըստ երևույթին, փայտաշեն և արդեն իր դարն ապրած պարիսպ, որը Վաղարշ քաջավորի (հավանաբար, Վաղարշ I-ի՝ 117-140-ական թթ.) կողմից փոխարինվել էր քարաշեն պարապով: Եթե Ծրեշ բլրի վրա գտնված Արտիմեդ-Վարդգեսավանը առհասարակ անպարհսա լիներ, ապա պատմահայրը այն կկոչեր պարզապես «աւանն Վարդգէսի», այլ ոչ թե «հզօր աւանն Վարդգէսի»:

Հայտնի է, որ հնագույն բնակավայրերը կատուցվում էին բարձունքների վրա, ուստի «զիտենք, որ «քաղաք» նշանակող բառերը բուն «քարձունք կամ ամրություն» նշանակությունն ունեն»».<sup>2</sup> Հմնտ. հեղեկվողական նախանեզվի միևնույն արմատից ծագած ազգակից լեզուների այն բառերը, որոնց մի մասը «քարձունք» է նշանակում, իսկ մյուս մասը՝ «քաղաք» (օրինակ, հայ. բարձունք, բարձրավանդակ), իին գերմ. bērg «զեռ», բայց նույն այդ լեզվում եարց «քաղաք»<sup>3</sup>: Նույն կերպ, Ծրեշ բլրի վրա գտնված հնագույն բնակավայրը Արտիմեդ անունը կարող էր կրել ինչպես բարձունքի վրա գտնվելու, այնպես էլ փայտաշեն պարիսպ ունենալու պատճառով: Դա ապացուցվում է Արտիմեդ տեղանվան սոուզաբնությամբ: Առաջին հայացքից կարող է թվական թեղանունն առնչվում է հունական Արտեմիս/Արտեմիդա դիցուհու անվանը: Սակայն, քանի որ այն շատ ավելի վաղ ժամանակներում է ստեղծվել, քան հելլենիզմի դարաշրջանը, ապա նրա սոուզաբնությունը պահանջում է հայոց լեզվի հնագույն ժամանակաշրջանի բառապաշարի վերհանում:

<sup>1</sup> Մովսեսի Խորենացոյ Պատմոթիւն Հայոց, Եր., 1981, Բ, կէ:

<sup>2</sup> Հ. Աճարյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետեւ՝ ՀԱԲ), հ. IV, Եր., 1979, էջ 542:

<sup>3</sup> ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 413-414:

*Արտիմելու*\**արտիմելու* տեղանվան առաջին բաղադրիչը նոյնական է Վանա լճի Արտիմ կղզու անվանը, իսկ դրանց արտիմելու առլա է նաև սեպագրային Ardini քաղաքի անվան (Մուծածիրի լեռնային քագավորանիստն էր), արարական աղբյուրներին հայտնի Սասուն-Խութի լեռնցիների արտա (արարերեն՝ al-artan) անվան և հայերեն արտեան «զեռան զազար» բառի մեջ: Արտիմելու տեղանվան արտիմ բաղադրիչի և Արտիմ կղզանվան մեջ հիմքային \*արտիմ կցորդված է -ի վերջածանցը, Ard-ini տեղանվան մեջ -ին կամ -ուր, իսկ արտա անվան մեջ -ան վերջածանցները: Արտեան< արտեան բառի կազմության տեսանկյունից հմնտ. երկեւան, իջեւան, հոտեւան, օթեւան բառերի համապատասխան մասերը: \*Արտ- արմատի, նրանով կազմված Արտիմելու տեղանվան առաջին բաղադրիչի, Արտիմ կղզանվան զուզահեռներին կարելի է հանդիպել նաև հնդեվրոպական այլ լեզուներում. հմնտ. ինն ինդկ. adri- «սար, ժայռ» և իյուր. adri «ժայռ, խութ» բառերը:<sup>4</sup> Այս առքիվ պեսոր է ի նկատի առնել ինչպես հ.-ե. d>հայ. տ հնչյունափոխությունը, այնպես էլ հայերենին բնորոշ հ.-ե. -dr->հայ. -րու դրափոխությունը (հմնտ. արտիմ/արտիկ, արտորալ, արտոոր): Այսպիսով, Ծրեշ բլուրի վրա կառուցված Արտիմելու տեղանվան արտիմ բաղադրիչը նշանակել է «քլոր, բարձունք»(թերևս նաև «զեռ, խութ, կղզի»):

Արտիմելու բաղադրիչներից բաղկացած տեղանվան երկրորդ բաղադրիչը՝ մեղ-ը, և հնդեվրոպական-հայկական ծագում ունի: Մենք այն համարում ենք մոյք «մույթ, նեցուկ, հենարան, մի բան հաստատ պահելու համար տակը դրված ցից» բառի արմատակիցը: Մոյք-ը ծագում է հ.-ե. \*meuthi- նախածկից, որի հիմքում հ.-ե. \*mei- «ցից տնկել, ցցով ամրացնել» արմատն է:<sup>5</sup> Այս նույն արմատից են ծագում ազգակից լեզուների հետևյալ բառերը. ինն ինդկ. methi «մույթ, ցից», mitn «հաստատված», mit «տնկած ցից», լատին. meta «սահման, ժայռ», tunico «պարսպել, պատ քաշել», tunicus «պատ», լիտու. miētas, լատիշ. mīets «ցանկապատի ցից» և այլն:<sup>6</sup> Արտիմելու տեղանվան դեպքում, բնականաբար ի նկատի ենք առնելու հնդեվրոպական ծագումով մեղ բաղադրիչը ոչ թե «ցից» նշանակությունը, որն արդեն իսկ ուներ մոյք արմատակից բառը, այլ այնպիսի մի ընդգրկուն նշանակություն, որպիսիք ունեին իրենց հնդեվրոպական ազգակիցներից լատիներեն տարս «պատ» և տոսո «պարսպել, պատ քաշել» բառերը: Ըստ այսմ, Արտիմելու տեղանվան իմաստը լինելու էր «ցցալատնեց ունեցող բլուր, փայտաշեն պարիսպով բնակավայր»: Այդպիսին էր լինելու Ծրեշ բլուրի վրա կառուցված նախնական բնակավայրը, որի հետնորդ Վարդգեսավանի հիմնադրումը ժողովուրդը վերագրել էր առասպելաբանական-վիպական Վարդգես Մանուկին:

Հայոց ինն բանահյուսության այս կերպարի սերտ առնչությունը Քասաղ գետի հետ, իր անվան Վարդ- (<\*վարդ < h.-ե. \*ued- «ջուր, գետ») բաղադրիչը և անվանը կից մանուկ նակդիրը հուշում են, որ նա ըմբռնվել է այնպիսի մի քուխմանուկ՝ ջրային պաշտելի ողի, ինչպիսիք ավելի վաղ ըմբռնվել են նաև Սևանա լճին առնչված \*Վեդուրը (Վեդ-ուր հմնտ. հ.-ե. \*ued- «ջուր, գետ» և \*ուր «որովի»), որի ամունից է առաջացել սեպագրային Վերդուրի-Երիունի մերձսևանյան գետամիության անունը, և Ախուրյան գետին առնչված \*Ախուրը (Ախ-ուր հմնտ. հ.-ե. \*ak<sup>u</sup>- «ջուր» և \*ուր «որովի»), որի ամու-

<sup>4</sup> Գ. Զահունյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 13, ծան. 8: U. Պետրոսյան, «Շարայի ցեղամիությունը» Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ.թ.ա VI-V դդ.), Լրաբեր հասարակական գիտությունների, 1979, թիվ 12, էջ 71, ծան. 42:

<sup>5</sup> ՀԱՐ, հ. III, Եր., 1977, էջ 343:

<sup>6</sup> Նույնը:

Այս ունենք *Ախորեան* գետանունը և սեպագրային *Ախորիանի* բնակավայրի անունը:<sup>7</sup> Հայոց պաշտելի այս ողջները ազգակիցներն են եղել իին իրանցիների և իին հնդիկների *Ապամ-Նապաս* կոչված (բառացի՝ «ջրերի զավակ») աստվածությունների: Դեռևս բնապաշտական հեռավոր ժամանակներում սկիզբ առած ջրային ոգիների պաշտամունքը մեր հավատալիքներում հարատևած լինելու մասին Մ.Արեւյանը գրում է. «Ըստ աղբյուրներ, հատկապես գետեր ու լճեր համարվում են բնակատեղիներ առասպեկական նարդակերպ և կենդանակերպ էակների, որոնք ունեն հրեղեն բնույթ և հրեղեն էլ կոչվում են»:<sup>8</sup> Այդ հրեղեն էակները նաև լուսեղեն են համարվել և լուսեղեն կոչվել: Հայ ժողովրդական հեքիաթներից մեկում «հուրնիկ հրեղեն» աղջիկո՞յ իր ապագա փեսացուին ասում է. «Չը լսե՞ր իս, ընձի Լուսեղեն կըսին, ես Զրերու քաջավորի աղջիկն իմ, եթու իմ մամուն ու պապուն կը բնակրիմ մըզ յադրբական»:<sup>10</sup>

Ջրային ողջների հրեղեն-լուսեղեն ըմբռնումը ի նկատի առնելով՝ փորձենք ստուգաբանել Վարդգիս Մանուկի հայրենի եզերքի և նրա բնակիչների անունները: Հնդեվրոպական նախալեզուն ուներ \*dei- «փայլել, լուսավորել» արմատը, որի \*dīu- ածանցյալից է ծագում մեր լեզվի *տի* «օր, օրվա լուսավոր մասը» բառը: Նույն \*dei- արմատից -eu մասնիկով ստուղծվել էին \*deieso «զոսավոր», իսկ -uo մասնիկով՝ \*deiuos «աստված, երկինք» բառերը: Այս արմատին հանգող բառերից են. իին հնդկ. dīvyn «երկնային», dēvā «աստված», ավեստ. daēvō «գլո», հուն. Διός/Ζεύς «Զևս», լատին. deus «աստված» և այլն:<sup>11</sup> Սրանց արմատակիցներն են ոչ միայն մեր *S̄hīr* (<\*տի-ր)<sup>12</sup> դիցանունը՝ մտավոր և հոգևորի լույսն անձնավորած աստծու անունը, այլև \*տի (*<\*deieso*) բառը՝ որպես լուսեղեն էակներին տրված լուսական հոգնակի թվով կունենար \*տիր, իսկ սեռականի հոգնակի թվով՝ \*տուաց տեսքը (հնմտ. *տի* «օր», որից՝ \*տուրնցեան, և *Աստուած<\*աս-տի-ած*): Իսկ \*տուաց *S̄mīhaug'* հ հնչյունի հավելումով՝ այնպէս, ինչպես զիիի բառի մեջ: Ըստ Հ.Աճառյանի՝ նախնական \*զի-ն «աստանալով ծառ կամ բույս նշանակող ի մասնիկը, դարձել է \*զիի, որը հորանցի պատճառով ներմուծելով հ, սուացվել է զիիի»:<sup>13</sup> Ուրեմն, \*տիր՝ նշանակում է «լուսեղեններ», \*տուաց՝ «լուսեղենների», իսկ *S̄mīhaug գաւառ*՝ «Լուսեղեն էակների գավառ»:

Տուաց գավառը տեղորշվել է Քաաադ գետի ավագանում, որովհետև Վարդգիս Մանուկը այս գետով էր հասել Արտիմեն: Քաաադի վտակներից մի քանիսն սկիզբ են առնում Արագած սրբազն լեռան լանջերից: Որ այս լեռը սրբազն է համարվել քե՛ բնապաշտ, քե՛ հերանու, քե՛ քրիստոնյա հայերի կողմից, պարզում է հայոց իին տոմարը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ամավա 20-րդ օրը ձոնված էր այս լեռան պաշտամունքին, ուստի և կրում էր Արագած անունը: Արագածի՝ սրբազն լույսի աղբյուր համարվելու փաստն են արձանագրել ինչպես նրան առնչվող Լուսավորչի մշտավառ կանթերի նաև ավանդագրույցը, այնպես էլ լեռանը կից գավառի Նիզ (Նիզասուն) անունը: Հմմտ. նիզ բառը, որը նշանակում է նաև «ձռղածն կամ գերանածն լույս, որ երևում է

<sup>7</sup> Ս. Դեսրույան, Ծ. Դեսրույան, Լ. Դեսրույան, «Զրերի զավակի» պաշտամունքի արտացոլումը սեպագրային մի քանի տեղանուններում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», պրակ 1, Գյումրի, 1998, էջ 78-80:

<sup>8</sup> Մ.Արեւյան, Երկեր, հ. VII, Եր., 1975, էջ 82-83:

<sup>9</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. X, Եր., 1967, էջ 20:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 17:

<sup>11</sup> ՀԱԲ, հ. IV, էջ 410:

<sup>12</sup> Է.Աղայան, Ակնարկներ հայոց տուարների պատմության, Եր., 1986, էջ 61 – 62:

<sup>13</sup> ՀԱԲ, հ. IV, էջ 627:

ամպերում»:<sup>14</sup> Սրանցից բացի, Վարդգես Մանուկի հայրենիք տանող ճանապարհն է ցույց տալիս նաև Քասաղ գետի՝ Արագածից սկիզբ առնող Ծաղվարդ վտակը:<sup>15</sup> Գր. Ղափանցյանը Ծաղվարդ/Ծաղվերդ գետանվան վարդ<\*վազր բաղադրիչը նույնն է համարում Եղվարդ, Թաղավարդ տեղանունների և Վարդաւառ տոնանվան համահունչ բաղադրիչների հետ՝ խեթերենի հետևորդյամբ դրանց վերագրելով «ջուր» նշանակությունը:<sup>16</sup>

Այդ նույն բաղադրիչն ունեն նաև Վարդամարդ (<\*վարդ-ա-մարդ) գետանունը, Նուարդ (<\*նու-վազր) և Վարդգէս (<\*վարդ-գէս) դիցանունները:<sup>17</sup> Վերջինս ջրերի պաշտամունքին է առնչվում ոչ միայն իր առաջին՝ Վարդ-, այլև Երկրորդ՝ գէս, բաղադրիչով: Այն նույնն է լինելու, ինչ Գիսանն դիցանվան Գիս- < գէս բաղադրիչը (Գիսաննի պաշտամունքի վայրն հայտնի էր Իննակնեան՝ գինն ակունք ունեցող» անունով): Եթե Ծաղվարդ գետանվան վարդ<\*վազր բաղադրիչն առնչվում է Վարդգես Մանուկի ջրային բնույթին, ապա իր շաղ բաղադրիչով էլ գետանունը, մեր կարծիքով, պեսք է, որ առնչվի նրա լրսեղեն էությանը: Հայերեն շող «արկի ճառագայթ, նշոյլ, ցոլք», «զուսավոր, փայլուն» բառը<sup>18</sup> ունեցել է իր շաղ տարրերակը, որի երբեմնի գոյության նասին են խոսում շաղադ «շողացող, փայլուն, պասպուն»,<sup>19</sup> շաղաւար «եթեր կամ երերային մասերից մեկը» և շաղաւարիլ «լուսնի կամ աստղերի շարժվելը» բառերը:<sup>20</sup> Ծողի ձայնադարձով շաղ տարրերակն էլ, ամենայն հավանականությամբ, դարձել է առաջին բաղադրիչը Ծաղավարդ (<\*շաղ-վազր) գետանվան, որն այսպիսով նշանակել է «զուսավոր ջուր, լրսեն գետ»: Հնատ. հայոց ոչ հավատալիքների սրբազն աղբյուրների լուսադրյուր անվանումը և այդպիսիք ունեցող տեղանքի ու բնակավայրերի Լուսադրյուր անունները:

Անկասկած, բուն առասպեկտում Վարդգես Մանուկն ընկալվել է այնպիսի մի ձկնամարդ (մարդածոկ), ինչպիսիք, հայոց հավատալիքների համաձայն, բնակվում էին մեր լեռնաշխարհի առանձին գետերում և լմերում: Արարատյան դաշտում, Էջմիածնի շրջանում գտնվող Սեծամոր (Ակնա, Այղը) լճի<sup>21</sup> վերաբերյալ պատմում էին, որ «Այս լիճը լիճն է հրեղեն ծիերով, սպիտակ գոմեշներով, մարդաձկներով և ուրիշ կենդանիներով»:<sup>22</sup> Իսկ Էջմիածինը նույն Վաղարշապատն է՝ Վարդգես Մանուկի հիմնադրած Վարդգեսավանը («աւանն Վարդգէսի»): Վարդգես Մանուկն իր ջրային բնույթով և լրսեղեն էությամբ նաև հայ ժողովրդական մի շարք հեքիաթներից հայտնի ձկնամարդու գորգահեռ կերպարն է: Հեքիաթային այս կերպարը նախ ծովկ է, ապա լրսերես մի պատանի կամ երիտասարդ, որն իր մերաշխարհային բարի գործերն ավարտելուց հետո վերստին ծովկ է դառնում և խորասուզվում իր հարազատ տարերքը:

Սրանց ընդհանուր առասպեկտաբանական հենքը եղել է ձկնամարդ առասպեկտաբանական էակի և նրա իրական նախատիպ ձկան տոտեմական պաշտամունքը՝ իր նյութական արտահայտությունը գտած ի դեմս վաղ երիտնյան «վիշապ» կոչված

<sup>14</sup> ՀԱԲ, հ. III, էջ 450:

<sup>15</sup> Ա. Ասլանյան, Հ. Գրգեարյան, Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Եր., 1981, էջ 149:

<sup>16</sup> Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն (իին շրջան), Եր., 1961, էջ 152; Գր. Կառավար, Իсторико-лингвистические работы к начальной истории армян, Ер., 1956, стр. 287-288.

<sup>17</sup> Ս. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 71-72:

<sup>18</sup> ՀԱԲ, հ. III, էջ 529:

<sup>19</sup> Ստ. Մայլսասյանց. Հայերեն բացատրական բառարան, հ. III, Եր., 1944, էջ 495:

<sup>20</sup> ՀԱԲ, հ. III, էջ 489:

<sup>21</sup> Ա. Ասլանյան, Հ. Գրգեարյան, նշվ. աշխ., էջ 22:

<sup>22</sup> Ա. Ղանձանյան, Ալանդապատում, Եր., 1969, էջ 79:

ձկնակերպ քարակորողների: Վարդես Մանուկի նախատիպ ձկնամարդ աստվածության պաշտամունքի նյութելին արտահայտությունները նաև վերապահում են Արագածի ձկնակերպ քարակորողները: Ի տարրերություն իր զուգահեռ կերպարների՝ մյուս ձկնամարդ է ակների, Երվանդունյաց արքայադասեր նկատմամբ տածած սիրո պատճառով առասպելական-վիպական Վարդես Մանուկն իր հարազատ ջրային միջավայր չեր վերադարձել, այլ «հատուած գնացեալ» (լստ երևոյթին, նաև մահկանացու դարձած) ամուսնացել էր արքայադասեր հետ և, ժողովրդի պատկերացմամբ՝ որպես իրենց սիրո առհավատչյա, Քասաղ զետի ափին կառուցել էր Վարդեսավանը:

## ОБ ИСТОРИЧЕСКОМ И МИФОЛОГИЧЕСКОМ В ЛЕГЕНДЕ ВАРДГЕС-МАНУКА

*Резюме*

*С. Петросян*

В недрах общеиндоевропейской мифологии зарождались образы индоиранского божества Апам-Напам (дословно – “сын вод, отприск вод”) и древнейшего армянского божества “сын воды”. В разных районах Армянского нагорья “сын воды” носил разные имена. В бассейне реки Ахурян он назывался \*Aħur. От этого теонима происходят потамоним *Aхурян* (Ցափրեան) и клинописный урбоним *Aħuriani*. В бассейне озера Севан “сын воды” назывался \*Uedur. От этого теонима происходят клинописный этноним *Ueduri* и хороним *Ueduri-Etiuni*. По древнеармянским эпическим сказаниям, Вардгес-Манук является основателем Вардгесавана (впоследствии – город Вагаршапат) у реки Касах. Прототип эпического Вардгес-Манука также божество, связанное с водой. Вероятно, *Вардгес* (Վարդես) один из вариантов имени “сына воды”. Компонент *Вард* в теониме *Вард-гес* одного происхождения как с компонентом *вард* в потамониме *Шагвард* (Շաղ-վարդ приток Касаха), так и с компонентом *Вард* в имени праздника *Варда-вар* (Վարդ-աշ-առ). В основе этих компонентов лежит слово индоевропейского происхождения \*вард<\*uadr- “вода, река”.